ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ

ՆՈՐԱԿԱԶՄ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԸ ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

20-րդ դ. հայ անվանի բանաստեղծ Ռ. Դավոյանի չափածո երկերն աչքի են ընկնում ինչպես գեղարվեստական բարձր արժանիքներով, այնպես էլ լեզվի և ոճի ինքնատիպությամբ ու թարմությամբ:

Տարբեր տարիներին գրված ժողովածուների միջոցով հեղինակը կարողանում է անսպասելի և անսովոր պատկերներով ու բանաստեղծական գյուտերով ընթերցողի համար բացահայտել իր ներաշխարհը: Սակայն գրողի համար կարևորը ոչ միայն մտահղացումն արտահայտելն է, այլև այն, որ դա բացահայտի գեղարվեստական կատարյալ ձևով՝ նաև լեզվական տեսակետից: Դրան հասնելու համար օգտագործում է հայերենի հարուստ բառագանձի անսպառ պաշարը: Այս դեպքում ևս լեզուն է այն կարևոր միջոցը, որով հեղինակը կարողանում է ազդել ընթերցողի վրա՝ առավել համոզիչ դարձնելով իր խոսքն իրեն հայտնի գեղարվեստական լեզվական միջոցներով ու ոճական հնարանքների ճիշտ ընտրությամբ ու օգտագործմամբ: Թեև հեղինակը հիմնականում հարազատ է մնում իր ժամանակաշրջանին հատուկ լեզվական իրողություններին, մանավանդ երբ խոսքը վերաբերում է քերականական կառուցվածքին, սակայն բառապաշարի օգտագործման, բառային զուգահեռ ձևերի ընտրության ժամանակ հեղինակի հնարավորություններն արդեն համեմատաբար անսահմանափակ են: Օգտվելով լեզվի բառակազմական միջոցներից՝ նա կազմում է նոր բառեր կամ յուրահատուկ ձևով կիրառում բառեր տարբեր բառակապակցություններում, որոնք էլ հետևանք են հեղինակի լեզվամտածողության վարպետության և անհատական ունակությունների: Ինչպես գիտենք, նորակազմ բառերը ծառայում են հեղինակային լեզվի անհատականացմանը, ինչպես նաև խոսքի ոճավորմանը, որոնց միջոցով գրողը կարողանում է ընթերցողի վրա թողնել ներգործություն և պատճառել գեղագիտական հաճույք: Եվ այս առումով է, որ սույն հոդվածում անդրադառնում ենք Ռ.Դավոյանի բառապաշարի այդ երևույթներին:

Ռ.Դավոյանը գրեթե միշտ զգացել է նոր, բառի, բառի իմաստային նոր կիրառության կարիք: Այդ է դրդել նրան հաճախակի դիմելու բառեր կազմելուն՝ իր գեղարվեստական մտածողությամբ, լեզվական ճաշակով, մանավանդ

բնագրի հետ կապված հանգամանքներով: Նրա նորաբանությունները ծնվում են բնագրի պահանջով, խոսքային տվյալ միջավայրի համար: Դրանք պատկերավոր բառեր են կազմված արդի հայերենի բառակազմական բազմապիսի միջոցներով ու եղանակներով:

Քննության նյութ դարձնելով Ռ. Դավոյանի չափածոյի բառապաշարում հանդիպող նորակազմ ածանցավոր բաղադրությունները՝ փորձենք բնութագրել հեղինակի լեզվամտածողությունը և ոճի ինքնատիպությունը:

Պետք է նկատել, որ դրանց առանձնացումը (հաշվի առնելով լեզվի պատմության մի շարք հանգամանքներ) կատարել ենք հարաբերական իմաստով՝ նախապես ստուգելով մի շարք բառարաններով[1]:

Ինչպես բառաբարդումը, ածանցումը ևս ճկուն և կատարելության հասնող օրենքներով հանդիսանում է հայոց լեզվի բառապաշարի հարստացման կարևորագույն միջոցներից մեկը: Չնայած հեղինակի գեղարվեստական խոսքում անհատական նորակազմությունների մեջ ածանցումն այնքան էլ ակտիվ բառակազմական եղանակ չէ, ի տարբերություն բառաբարդման, այդուհանդերձ, նման նորակազմություններն աչքի են ընկնում իրենց գեղարվեստական-ոճական ինքնատիպությամբ և ըստ բառակազմական հիմքի բաժանվում են երկու խմբի պարզ բաղադրվող հիմքով և բարդ բաղադրվող հիմքով ածանցավոր բառեր:

Ա) Պարզ բաղադրվող հիմքով ածանցավոր բառերը բաղադրված են հետևյալ կաղապարներով. *1)նախածանց+արմատ.* հեղինակի գեղարվեստական խոսքում գերակշռություն ունեն ածականակերտ ածանցները, որոնցից ամենաակտիվը թերևս *ան-* ածանցն է: Սրանով կազմված բազմաթիվ նորակազմ բառեր իրենց իմաստով միանգամայն մատչելի են և արտահայտչականությամբ էլ բավականին հարուստ. օրինակ՝ *անտոթ:*

(«Ես իմ երգի *անտոթ* անապատն եմ փռում». Ռ,79), *անպատրույգ* (« Իմ հայրենիքը էլ չի այրվելու Վշտի *անպատրույգ* կրակարանում». ԸԵ,323), *անճիչ* («Դեղին փայլով տխուր մի արհամարհանք Աշնան մշուշների անհանգրվան, *անճիչ* ճանապարհով Լուռ ձգվում է» Ռ,66), *անխարդավ* («Ասում ես ինձ՝ ապրիր *անխարդավ* ու աննենգ». ԿԲԱ,51) և այլն:

Նման ածականակերտ ածանցներով կազմված նորանոր բառերով Ռ. Դավոյանը թարմացնում և ուժեղացնում է խոսքի արտահայտչականությունը:

---

[1] Տե՛ս, *Ստ. Մալխասեանց,* Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Երևան, 1944-1945: *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան,* հհ. 1-4,Երևան, 1969-1980: էդ. *Աղայան,* Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976: *Ս. Էլոյան,* Արդի հայերենի նորաբանությունների բացատրական բառարան, Երևան, 2002: *Փ. Սեյթիխան-յան,* Նոր բառերի բացատրական բառարան, Երևան, 1996:

2) Բանաստեղծական պատկերի ոճավորման, առհասարակ պատկերավորության, արտահայտչականության, փոխաբերացման և այլն առումներով բավականին տպավորիչ են *արմատ+վերջածանց* կաղապարով կազմված բարդությունները: Նշենք, որ դրանք, ի տարբերություն նախածանցավոր բառերի, գերակշռում են և նպատակահարմար է այս բաղադրությունների ուսումնասիրությունը տանել ըստ այն բանի, թե դրանցով բառերի խոսքիմասային պատկանելության ինչպիսի՞ խմբեր, իմաստային ինչպիսի՞ խմբավորումներ են ստեղծվում: Ըստ այդմ էլ, ի հայտ ենք բերում ածանցումների երկու խումբ՝ համադրական բառույթներ, որոնք արտահայտում են իրի, երևույթի կամ առարկայացած գործողության, եղելության իմաստ, և բառույթներ, որոնք ունեն հատկանիշի գաղափար:

Մի խոսքով, անհատական նորակազմությունները, որոնց ձևաբանական կազմը բազմազան է, հանդես են գալիս որպես գոյական, ածական, մակբայ, ինչպես՝ *-եղեն.* այս ածանցով անսովոր և անսպասելի նորակերտություններ է կերտում, որոնց մեջ ակտիվանում է հատկանիշային իմաստը, ինչպես՝ *ծառեղեն* («Ժպիտներ են շողում... Ինչպես տերևներին Այդ *ծառեղեն* կյանքի». ՊՎ,77), *գետեղեն* («Եվ տղմոտվելով ու լճանալով, Սանձվեց *գետեղեն*-հրեղեն այդ ձին». ՔԲ,42). *-ոտ.* բանաստեղծական հնչեղություն ունեցող բառերի ստեղծման գործում նկատելի դեր ունի այս ածանցը, հատկապես այն դեպքերում, երբ օգտագործվում է ոչ թանձրացական հասկացություն արտահայտող բառերի կազմում, ինչպես՝ *մժոտ* («Փակեց իսկույն աչքը *մժոտ* ». Ը.Ե,570). *ուկ.* ժողովրդական երանգ ունեցող այս վերջածանցով, որը գալիս է հիմնականում բարբառներից, ստեղծվում է *սարդուկ* նորակազմությունը («Սակայն այդ *սարդուկի* սուզանավը անձայն Իջել էր հատակը լուսնի ճերմակ ծովի». Ը.Ե,126): Այսպիսի կազմությունները նպաստում են բանարվեստի լեզվի ժողովրդայնությանը, բանաստեղծական խոսքը կենդանի և աշխույժ դարձնելուն. *ուն.* սովորաբար ածականակերտ վերջածանցներից «ամենաբանաստեղծականը» այս վերջածանցն է, սակայն, պետք է նշենք, որ այնքան էլ կենսունակ չէ հեղինակային նորաբանություններ կերտելու գործում և նրանով կազմվում են խիստ սակավաթիվ հեղինակային բառեր: Ռ.Դավոյանի մոտ հանդիպում ենք *վեհերուն* նորակազմությունը («Շողեր էին՝ Նուրբ ու *վեհերուն* Դժոխք կյանքի մեջ, Ոգու մեջ ներհուն». ՏՍ,304):

ա) Ածականակերտ վերջածանցներով են կազմվել նաև հետևյալ նորակազմությունները՝ *իչ՝ ոգիչ* («Եվ լսեցիք երկար Լռությունն այդ *ոգիչ* ». ՔԲ,211), *ական՝ թիթեռական* («Նրանց հոգին գույնն է լույսի թևերի վրա՝ Նրանց շրշյունի մեջ մեղմ ու *թիթեռական* ». Ը.Ե,510) և այլն:

բ) Գոյականակերտ ածանցներն անհամեմատ ավելի պասիվ դեր ունեն անհատական նորակազմությունների կերտման հարցում: Այսպես՝

- *անք՝ շողանք* («Եվ ի՞նչ թրթիռ կա նրանց *շողանքում*». ՏՍ,254). զգալի է իմաստի խտացումը այս բառի մեջ, որն արտահայտում է առարկայացված գործողություն. *-ուիի՝ ձկնուիի* («Այնտեղ ոսկե ձկներ կային, Ադամանդե՝ ձկնուիիներ». ՔԲ,72). - *ավոր+վ+ած* կաղապարով ստեղծվում է *բորբավորված* նորակազմությունը («Նրանք պիտի հավաքվեին՝ *Բորբավորված* ու անձանձիր». ՔԲ,28):

գ) Նոր բառերի կազմում անհամեմատ ավելի փոքր տեղ են զբաղեցնում մակբայակերտ ածանցներով կազմված բառերը, ինչպես՝ - *աբար՝ պոետաբար* («Պոետ-ծուկը նստել գահին, Վեհորեն ու *պոետաբար*». ՔԲ,72) և այլն:

դ) Ինչ վերաբերում է բայական նորակազմությունների գործածությանը, ապա պետք է նշել, որ գեղարվեստական խոսքում դրանք հանդես են գալիս որպես խոսքի սեղմության և թարմության կարևոր միջոց: Այսպես՝

- *ել* կենսունակ բայական-բայակերտական ածանցով բայ է կերտում գոյականից, ինչպես՝ *զորքել* («Բայց ես այսօր լիքն եմ Քո մեղմ,տարաշխարհիկ աշնան լույսով,... Որ կարող է զնգալ, Զգացմունքներ զորքել». ՔԲ,177):

Բայական նորակազմության մեջ բավական ակտիվ են կրավորական ձևերը, օրինակ՝ - *վ* բայակերտական ածանցով կազմում է *երազվել* նորակազմությունը («Այս պատանու հոգուն ի՞նչ է *երազվում* ». ՊՎ,27), իրականում այս ձևը գոյություն չունի:

Այսպիսի կաղապարներով ստեղծված բանաստեղծական բառերը կամ հեղինակային նորաբանություններն օժտված են ցայտուն և ինքնատիպ հեղինակային դրոշմով:

3) Պարզ ածանցավոր բառերի շարքում առաձին խումբ են կազմում նաև *նախածանց+արմատ+վերջածանց* կաղապարն ունեցող նորակազմ բառերը, որոնք հիմնականում ածականներ են: Նման կազմություններն իրենց բանաստեղծական-անհատական մտածողության յուրահատկությամբ խիստ ընդլայնում են բառերի իմաստային կառուցվածքի սահմանները գեղարվեստական խոսքին հաղորդելով մի առանձին թարմություն և ոճական երանգ: Ինչպես՝ *անմեղսական* («Յուղիտան այնքան նուրբ է ու քնքուշ, Այնքան անարատ ու անմեղսական». ՏՍ,353), *անհոգեբան* («Սպասում են իրենց տղամարդկանց *Անհոգեբան*, փոքրիկ զորությանը չնչին». ԸԵ,111), *անբացառյալ* («Եվ ամենքին *անբացառյալ* Ամեն ազգի եղբայրներին». ԸԵ,588), *անծագում* («Մի՞թե ողջ մարդկության բառերն այս թանկագին... կարող են ամփոփվել մի *անծագում*, մի որբ Խեղճ ու կրակ շան մեջ». ԿԲԱ,19), *անհուգում* («Դու հեռացար այնպես փափուկ ու բնական, ... Այնքան մտերմորեն և լուռ, և *անհուգում* ». ԿԲԱ,13) և

այլն: Բերված ածանցումներով կազմված նորակազմությունները բանաստեղծական յուրահատուկ մտածողությամբ ստեղծված, ոճականորեն խիստ տարողունակ ու շեշտված բառեր են, որոնք նպաստում են բանատողերի ոճական ուղղվածությանը: Սրանց մեջ կան նաև այնպիսիները, որոնք բաղադրված են դերբայական հիմքից և ի ածանցից, ինչպես՝ *անխժռելի* («Անթիվ Դանթեներ Պսակների մեջ չքնաղ փշերի Կամ հզոր, Անպարտ Եվ *անխժռելի*». ՏՍ,338), *անարթնանալի* («Թեկուզ անդարձ, *անարթնանալի* Մենք կպառկեինք». Ռ,44), *անքերելի* («Հազարամյա ողբից ազատելով նրանց, Եվ քերելով նրանց վշտի *անքերելիս*». ՔԲ,203), *անարգելելի* («Եվ կուտակվում է անվերջ ու անվերջ, *Անարգելելի* և անբռնելի». ՏՍ,339) և այլն:

Այսպիսի բառերի ոճական կիրառությամբ Ռ. Դավոյանը հասնում է բանաստեղծական խոսքի բազմերանգությանն ու գունագեղությանը:

Ռ.Դավոյանը հաճախ չ ժխտական մասնիկով և դերբայական վերջավորությամբ այնպիսի բառեր է ստեղծում, որոնք իրենց նորությամբ, անսպասելիությամբ և արտառոցությամբ անմիջապես աչքի են ընկնում և անսովոր թարմություն հաղորդում խոսքաշարին, ինչպես՝ *չլիզված* («Մեռածների թիվը աշտարակ է բարձր, Որտեղ ապրում ենք մենք Սեր *չլիզված* հոգու մենակությամբ». ԿԲԱ,82), *չստեղծողներ* («Հետո ավերեցին *չստեղծողներն* օտար». ԻԱ,14) և այլն:

Բ) Բարդ բաղադրվող հիմքով ածանցավոր բառեր, որոնք միմյանցից տարբերվում են հետևյալ կաղապարներով՝ 1) *նախածանց+արմատ+արմատ*, որոնց մեջ դարձյալ գերակշռում է *ան* ժխտական նախածանցը, ինչպես՝ *անորդակեր* («Ի զեն՝ հանուն սիրո, Հանուն արդար դատի, Հանուն երազանքի *անորդակեր* աճման». ՔԲ, 215), *անոտնակոխ* («Որ նավարկեմ դեպի այն աշխարհը անհայտ, Որտեղ սպասում են ինձ պսպղուն աստղեր, *անոտնակոխ* ձներ». ՊՎ,44), *անգերակա* («Եվ հույս ունեմ, որ ձեր Խոսքը դեռ կլսեմ, Ձեր խոսքը պարզ, մեկին, Աներկդիմի իսպառ, Բնավ *անգերակա*». ՊՎ,59), *անանձնատուր* («Եվ ինչպես *անանձնատուր* աղջիկ, Խոսքերով բռնաբարված իմ համառությունը ճանապարհ է ելնում այնտեղ». ՔԲ,172) և այլն:

Ոճականորեն տարողունակ հեղինակային այս բառերը ցայտունորեն ցուցադրում են հայերենի բառակազմության ճկունության ակնհայտ իրողությունը:

2) Բանաստեղծական վարպետության, անհատական լեզվազգացողության արդյունք է *նախածանց+արմատ+արմատ+վերջածանց* կաղապարով ստեղծված *անետգնելի* նորակազմությունը («Բայց չէ՞ որ ես դեռ մանկուց գիտեի, Որ կյանքը, կյանքը մի *անետգնելի* գրավ է՝ ընդմիշտ Հանձնված մահին». ՔԲ,292):

3) *Արմատ+արմատ+վերջածանց* կաղապարով կազմում է գոյականներ, ինչպես՝ *սիրաբաղձություն* («Քո հայացքի մեջ Կրկին թախծություն, Որ թե կուրորեն Թարգմանենք բառով, Պիտի որ հնչի՝ *Սիրաբաղձություն*». ՏՍ,270), *ինքնահմայություն* (ՔԲ,43, վերնագիր): *Ում* վերջածանցի օգտագործմամբ բանաստեղծը ստեղծում է այնպիսի գոյականներ, որոնք նշում են գործողության կամ եղելության ընդհանուր հասկացություն, առանց ընթացքայնության գաղափարի, որով և առանձնանում են բայ խոսքի մասից և մտնում գոյականի խմբի մեջ, ինչպես՝ *ինքնագտնում* («Մինչդեռ նա դանդաղ սուզվում է դեպի *ինքնագտնումի* խորքերն անմեկին». ՏՍ,286), *ինքնահանդիպում* («Ատամների տակ սրսփում եմ ես՝ *Ինքնահանդիպման* տկլոր վայրկյանին». Ռ,83) և այլն: Այս ածանցով կազմված գոյականի օգտագործումը հաճախ առիթ է դառնում արտահայտության, ամբողջ նախադասության կառուցվածքի թարմացման: Այսպիսի կաղապարով բաղադրվում են բազմաթիվ ածականներ, ինչպես՝ *ատամնանիվավոր* («*Ատամնանիվավոր* քաղաքաների առջև Նստած էին անատամ գյուղակները հլու». ՊՎ,31), *ախտափրկիչ* («Աշնան շրշյուններով մեզ կանչում է անհագ Դեպի *ախտափրկիչ* ջերմությունը հույսի». ՔԲ,207), *դեղնաթիկնոց* («Արշավում է թեթև *դեղնաթիկնոց* կապույտ քամուն հեծած». ՔԲ,197), *ոսկեթիկնոց* («*Ոսկեթիկնոց* ու ոսկեխույր Աշնան հեռուն են սլանում». ԿԲԱ,46) և այլն:

Նման նորակազմությունները հեղինակի խոսքի բարձր արտահայտչականության, ինքնատիպության և յուրօրինակ հնչեղության դրսևորումներ են:

Այսպիսով, բարդ և ածանցավոր բառերի բաղադրիչների ընտրությունը սերտորեն կապված է հեղինակի ճաշակի, նպատակի, ասելիքի ու հաղորդման բովանդակության և բանաստեղծական մտածողության որակի հետ: Նման բաղադրությունները, կազմված լինելով լեզվի բառակազմական օրինաչափությունների հիմքով կամ կազմված լինելով հայերենի կենսունակ բառակազմական կաղապարների համաբանությամբ, կարող են մտնել նրա բառապաշարի մեջ, սակայն շատերն էլ կմնան միայն իրենց ծնող վերոհիշյալ համատեքստերում՝ իբրև իրավիճակային պահանջով կազմված բառեր:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸԵ- Ընտիր երկեր, Երևան, 1987.
2. ԻԱ- Իմ աշխարհը, Երևան, 1963.
3. ԿԲԱ- Կեղևդ բաց արա, Երևան, 1975.
4. ՊՎ- Պղնձե վարդ, Երևան, 1983.
5. ՏՍ- Տաք սալեր, Երևան, 1978.
6. ՔԲ- Քարե բարձ, Երևան, 1989.
7. Ռ- Ռեքվիեմ, Երևան, 1969.